



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

29 օգոստոսի 2019թ.

N 9-Ա

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 48-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽԱԳԾԻ (ՀԱՐՑԻ) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԶԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում փոփոխություններ կատարելու նախագծի (հարցի) քաղաքացիական նախաձեռնության կարգով կազմակերպված ստորագրահավաքի ստորագրությունների վավերականությունը պարզելու նպատակով նախաձեռնող խմբի կողմից 2019թ. հուլիսի 31-ին N Ա-158 գրությամբ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված թվով 21049 (քսանմեկ հազար քառասունինը) ստորագրությունները՝ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **պ ա թ գ է ց.**

Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2019թ. մայիսի 31-ի N 6-Ա որոշմամբ բավարարել է Վլադիմիր Պողոսյանի դիմումը և գրանցել քաղաքացիական նախաձեռնության կարգով Արցախի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխությունների նախագիծ ներկայացրած նախաձեռնող խմբին (բաղկացած 218 անդամներից), ինչպես նաև սահմանվել են Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու նախաձեռնության իրավունք ունեցող առնվազն 10278 (տասը հազար երկու հարյուր յոթանասունույթ) հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը և ստորագրությունների հավաքման համար ամրագրված 45-օրյա ժամկետ է սահմանվել 2019թ. հունիս 4-ից մինչև 2019թ. հուլիսի 18-ը ներառյալ:

Նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ Վ.Պողոսյանը 2019թ. հուլիսի 31-ին N Ա-158 գրությամբ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2019թ. փետրվարի 18-ի N 4-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն ստորագրությունների վավերականությունը ուսումնասիրելու նպատակով ներկայացրել է

3244 (երեք հազար երկու հարյուր քառասունչորս) ձևաթերթիկները, ինչպես նաև 10 (տասը) քաղաքացիների կողմից ներկայացված՝ տեղում ստորագրահավաքին միանալու վերաբերյալ նոտարական կարգով տրված հայտարարությունները՝ ընդամենը 21049 (քսանմեկ հազար քառասունինը) ստորագրություն 3254 (երեք հազար երկու հարյուր հիսունչորս) թերթի վրա:

Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2019թ. փետրվարի 18-ի «Ստորագրությունների վավերականության հաստատման կարգը սահմանելու մասին» N 4-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝

ա) Հավաքված ստորագրությունը համարվում է վավեր, եթե ձևաթերթիկում պահանջվող տվյալներն ամբողջական են և լրացված են պատշաճ ձևով:

Ներկայացված ստորագրությունների խմբաքանակից ստորագրությունը հանվում է, եթե՝

- 1) ձևաթերթիկում պահանջվող տվյալներն ամբողջական չեն,
- 2) ձևաթերթիկում պահանջվող տվյալները լրացված են ոչ պատշաճ ձևով,
- 3) քաղաքացու տվյալները կրկնվում են. այս դեպքում հաշվվում է տվյալ քաղաքացու միայն մեկ ստորագրությունը:

բ) Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրականացնում է ստորագրությունների վավերականության հաստատում՝ նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի դիմումը և ստորագրված ձևաթերթիկներն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

գ) Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ստորագրությունների վավերականությունը հաստատելու նպատակով կատարվող ուսումնասիրությունների շրջանակներում կարող է կատարել այցելություններ, հրավիրել, հարցում կատարել ստորագրողներին, նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչին, նախաձեռնող խմբի անդամներին և ստորագրության հավաքումն իրականացրած ներկայացուցիչներին, անհրաժեշտության դեպքում ներգրավել մասնագետների և համագործակցել պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և մասնագիտացված կազմակերպությունների հետ:

դ) Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ստորագրությունների վավերականությունը հաստատելու նպատակով կարող է իրականացնել այլընտրանքային ստուգումներ, ստորագրված ձևաթերթիկների տվյալների համադրում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տիրապետման ներքո գտնվող հասանելի տեղեկությունների բազաներում (շտեմարաններում) առկա տվյալների հետ, կիրառել տեխնիկաձրագրային ապահովման միջոցներ՝ հնարավոր սխալները և կրկնությունները հայտնաբերելու համար:

ե) Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ստորագրությունների վավերականությունը պարզելու նպատակով կատարված ուսումնասիրությունների արդյունքում կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

1) ստորագրությունների վավերականությունը հաստատելու մասին, եթե առկա են Արցախի Հանրապետության սահմանադրությամբ պահանջվող քանակի վավեր ստորագրություններ.

2) ստորագրությունների վավերականության հաստատումը մերժելու մասին, եթե Արցախի Հանրապետության սահմանադրությամբ պահանջվող քանակի վավեր ստորագրություններ առկա չեն:

Նախաձեռնող խմբի կողմից ներկայացված 21049 ստորագրությունների վավերականությունը պարզելու նպատակով իրականացված ուսումնասիրությունների արդյունքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ստորագրությունների ընդհանուր խմբաքանակից հանվել են (անվավեր են) 1115 ստորագրություններ, այդ թվում՝

1) ձևաթերթիկներում ստորագրած 325 քաղաքացու պահանջվող տվյալները ամբողջական չեն.

2) ձևաթերթիկներում ստորագրած 347 քաղաքացու պահանջվող տվյալները լրացված են ոչ պատշաճ ձևով.

3) ձևաթերթիկներում 262 քաղաքացու տվյալները կրկնվում են, որոնցից վավեր են ճանաչվել 131 ստորագրություն.

4) ստորագրությունների ընդհանուր խմբաքանակից հանվում են նաև՝ 70 ստորագրություն, որոնցում նշված անձնագրային տվյալներով քաղաքացիներ գոյություն չունեն, 92՝ հին անձնագրային տվյալներով, 79՝ զորակոչված կամ հաշվառում չունեցող քաղաքացիների, 33՝ ՀՀ և 5 օտարերկրյա քաղաքացիների ստորագրություն, 24 անչափահաս և 6 անգործունակ ճանաչված քաղաքացու ստորագրություն և 3 քաղաքացու ստորագրություն, որոնք մասնակցել են ստորագրահավաքին կենսաչափական անձնագրով:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2019թ. փետրվարի 18-ի «Ստորագրությունների վավերականության հաստատման կարգը սահմանելու մասին» N 4-Ն որոշման 8-րդ կետի և 2019թ. մայիսի 31-ի «Նախաձեռնող խումբ և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ գրանցելու մասին Վլադիմիր Պողոսյանի դիմումի քննարկման մասին» N 6-Ա որոշման 2-րդ կետի պահանջներով՝ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **ո ր ո շ ռ ու մ է.**

1. Հաստատել Արցախի Հանրապետության Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում փոփոխություններ կատարելու նախագծի (հարցի) քաղաքացիական նախաձեռնության կարգով կազմակերպված ստորագրահավաքի 19934 (տասնհինը հազար ինը հարյուր երեսունչորս) ստորագրությունների վավերականությունը:

2. Սույն որոշումը մինչև հաջորդ օրվա ավարտը տեղադրել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում և 3-օրյա ժամկետում ուղարկել քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցչին:

3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Ս.Մելքումյանին:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՆԱԽԱԳԱՀԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Ե.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ